

տաճին, որուն մէկ զարնուածքը բաւա-
կան է զիրենք մեռցնելու. ուստի ա-
մենայն զգուշութեամբ անոր աջ ու
ձախ կողմը կը պաշարեն՝ ու ջրին տակը
մտնելով ու օդին մէջ ցատքելով ամէն
կողմէն զանիկայ կը վիրաւորեն, անանկ
որ միշտ կէտը յաղթուած կը փախչի,
ծովուն ընդարձակութիւնը իր արիւ-
նովը ներկելով: Այնպէս վարպետու-
թեամբ կը յաղթէ նաև կոկորդիլոս-
ներուն, ջրին խորը իջնելով և շի-
տակ դէպ ի վեր ելելով՝ անոր փորը
կը պատուէ: Բայց երբեմն ալ իր յան-
դըգնութեանը զոհ կ'ըլլայ. վառն զի
նաւերուն ու ժով երթալու ատենն ալ
անոնց վրայ կը յարձկի, ու չկրնալով
ինքզինքը բռնել՝ քիթը նաւուն կողին
մէջ կը խրի ու կը բռնուի, և զինքը
ազատելու համար շատ անգամ այնչափ
ուժ կու տայ որ քիթը կը կոտրէ կը
թողու ու ինքը կը փախչի:

Երած պատկերնիս առաջաստաւոր
թրածկան ամենէն պզտի տեսակն է,
փորուն տակը արծաթագոյն է, վրան
մթնագոյն ու թեփով պատած, ու եր-
կայնութիւնը ու թը տասը ոտքէն աւե-
լի չըլլար, իրեն վերի ու վարի ծամելիքը
և քիմքը նուրբ ակռայներով պատած է,
թրին երկայնութիւնը երկու իրեք ոտք
է՝ նեղ ու սրածայր: Իրեն կարգէ դուրս
յատկութիւնը կռնրկին վրայի լուղակն
է, որ երկնագոյն ու մութ կարմիր բը-
ծերով կաշի մըն է, ծոծրակէն ինչուան
պոչը. ասիկայ ջրին մէջ կը բարձրանայ
ու կը կլորնայ և առաջաստի տեղ կը բա-
նի. ասոր համար է որ աս տեսակին ա-
նունը Առաջաստաւոր թրածուկն դրած
են: Երկայ չէ թէ միայն մըրկէ չլախ-
նար, հապա ան ատեն աւելի ծովուն
երեսը կ'երևայ ու մանր ձկները կոր-
սայ. աս բանիս համար նաւաստիները
զասիկայ փոթորկի նշան կը սեպեն.
միսն ալ քանի որ պզտի է՝ շատ համեղ
կ'ըլլայ, բայց մեծնալով շատ կը դիւ-
նայ ու սաստիկ եղոտ ըլլալուն դժուար
կը մարսուի. զասիկայ որսալը շատ դը-
ժուար է, վառն զի իր ճարպիկ ու ա-
րագ շարժուածքովը արձէններէ դիւ-

րաւ կազատի, իսկ ուռկանի մէջ որ
փախուի՝ բոլոր կը բզըկտէ ու կը փախչի:

Եւ ասանկ ըլլալուն՝ մարդ կարծէ
թէ աս ձուկս միայն ծերութենէ պէտք
է որ մեռնի. բայց անանկ չէ, ինքն ալ
իր թշնամին ունի, որ որչափ խեղճ ու
չնչին բան մի է՝ այնչափ աւելի ան-
գութ է. ասիկայ պզտի միջատ մըն է
որ կ'երթայ անոնց կամ լուղակին կամ
ականջին կամ ուրիշ փափուկ տեղը կը
կպչի, ու կը սկսի անոր մարմինը ողջ
ողջ կրծել. խեղճ ձկան վրայ աս ան-
ընդհատ տանջանքէն կատաղութիւն
մը կու գայ, կը սկսի կայծակի պէս ա-
րագ լողալ, ջրէն դուրս ցատքել ու ծո-
վուն խորը իջնել, ու ինքզինքը նաւե-
րուն ու ժայռերուն զարնել, որպէս զի
ան տանջանքէն ազատի. երբեմն ալ
ինքզինքը ցամաքը նետելով սաստիկ
ձգձգութեամբ ու ճապկրտելով կը մեռնի,
և տեսողը շատ անգամ չիմանար ա-
նոր պատճառը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

ԱՅՏԵԱՆ, տարուան I հետոնի համաշ-
խարհական արուեստից հանդիսադրու-
թենէն ետև ամէն ազգ յորդորուեցան
նոյն տեսակ օգտակար հանգէսներն ի-
րենց երկրին մէջն ալ նորոգելու, գիտ-
նալով թէ որչափ խրախոյս ու յորդոր
կ'ըլլայ անով ամէն ազգի երկրագոր-
ծութեանը, ճարտարութեանը և ձե-
ռագործներուն: Արդ կարելի բան է
արդեօք մեր ազգային ճարտարութեան
ալ հանդիսադրութիւն մը ընել գալ տա-
րուան այսինքն 1853 մէջ, և ինչ կարդ
ու կանոն սահմանելու է՝ որ ազգին ա-
մէն վիճակի մարդկանց ալ օգտակար ըլ-
լայ: